ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2008թ. ապրիլի 23-ի նիստի

Խորհրդի 29 անդամներից ներկա էին 28-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Հ. Ղուկասյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը /կցվում է/, որը միաձայն հաստատվեց: Մինչև օրակարգի հարցերի քննարկմանն անցնելը խորհրդի նախագահը խորհրդի, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կոլեկտիվի և ուսանողության անունից շնորհավորեց ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի անդամ, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Հարությունյանի ծննդյան 60-ամյակը:

1. ԼՍԵՑԻՆ. Ուսանողական գիտական ընկերության նախագահի տարեկան հաշվետվությունը կատարված աշխատանքների վերաբերյալ (զեկուցող՝ ՈՒԳԸ նախագահ Ս. Թևանյան /հաշվետվությունը կցվում է/):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Լ. Օհանյանը, Ա. Վաղարշյանը, Տ. Բարսեղյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ուսանողական գիտական ընկերության նախագահի տարեկան հաշվետվությունն ընդունել ի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում ընկերության կատարված աշխատանքները գնահատել դրական:

2. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի տարեկան հաշվետվությունը ուսումնական և գիտական գործունեության մասին (զեկուցող՝ ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու Ռ. Եղյան):

Հաշվետվությունը կցվում է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ. Հարությունյանը, Ս. Մուրադյանը, Գ. Ղարախանյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում կատարված աշխատանքը գնահատել դրական:

3. ԼՍԵՑԻՆ. Պետական քննությունների անցկացման և ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստության վերաբերյալ հարցը, զեկուցող՝ իրավագիտության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գ. Ղազինյան:

Զեկուցողը նշեց, որ մայիս ամսից սկսվում են բակալավրիատի պետական քննությունները, ինչպես նաև ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի պաշտպանությունները: Գ. Ղազինյանը կարևորեց բոլոր հանձնաժողովների կողմից ուսանողների գիտելիքների ստուգման միանման մոտեցում ցուցաբերելու և գնահատման միասնական չափանիշներ կիրառելու կարևորությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Դիլբանդյանը, Տ. Բարսեղյանը, Ս. Մեղրյանը, Ա. Վաղարշյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Պետական քննությունների անցկացման և ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստության վերաբերյալ զեկուցումն ընդունել ի գիտություն:

4.1. ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ Սլավոնական պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի քրեական և քրեակատարողական ամբիոնի հայցորդ Սոնա Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Դիլբանդյանը, Հ. Ղուկասյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա) Հաստատել Ս. Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեման «Դատական նախադեպը ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04. դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն,

փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն),

բ) Ս. Գրիգորյանի գիտական ղեկավար նշանակել իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Ղամբարյանին,

գ) միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի որոշումը:

4.2. ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ նույն ամբիոնի 2004 թվականի հայցորդ Արսեն Այվազյանի ատեստավորման վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Դիլբանդյանը, Հ. Ղուկասյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով, որ Ա. Այվազյանը 2007 թվականի աշնանը ատեստավորվել էր պայմանականորեն, հանձնել է թեկնածուական մինիմումի երկու քննություն /փիլիսոփայություն և օտար լեզու/ և ստուգարք ինֆորմատիկայից, հրատարակել է չորս գիտական հոդված, տպագրության է պատրաստել ևս մեկը, պատշաճ մակարդակով ներկայացրել է ատենախոսության մի մասը, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.3. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր Գեղամ Ղարախանյանի «Հայաստանի Հանրապետության ընտանեկան իրավունք» վերտառությամբ դասագիրքը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Բարսեղյանը, Ս. Մեղրյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով մեթոդական խորհրդի միջնորդությունը, ինչպես նաև այն, որ դասագիրքը գրված է պատշաճ մակարդակով և համապատասխանում է դասընթացի ծրագրին, Գ. Ղարախանյանի «Հայաստանի Հանրապետության ընտանեկան իրավունք» վերտառությամբ դասագիրքը երաշխավորել տպագրության:

4.4. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու Հարություն Խաչիկյանի «Ազատազրկում. կրիմինալոգիական և քրեակատարողական հիմնախնդիրներ» (ռուսերեն լեզվով) վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Գաբուզյանը, Ս. Առաքելյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով մեթոդական խորհրդի միջնորդությունը, ինչպես նաև այն, որ նշված մենագրությունը գրված է պատշաճ գիտական մակարդակով և ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն, Հ. Խաչիկյանի «Ազատազրկում. կրիմինալոգիական և քրեակատարողական հիմնախնդիրներ» (ռուսերեն լեզվով) վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Գ.ՂԱԶԻՆՅԱՆ**

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

ՔԱՂՎԱԾՔ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի

2008թ. ապրիլի 23-ի նիստի թիվ 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ Սլավոնական պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի քրեական և քրեակատարողական ամբիոնի հայցորդ Սոնա Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Դիլբանդյանը, Հ. Ղուկասյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա) Հաստատել Ս. Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեման «Դատական նախադեպը ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04. դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն),

բ) Ս. Գրիգորյանի գիտական ղեկավար նշանակել իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Ղամբարյանին,

գ) միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի որոշումը:

Խորհրդի նախագահ *Գ. Ղազինյան*

Խորհրդի քարտուղար *Հ. Ղուկասյան*

Իսկականի հետ ճիշտ է

Խորհրդի քարտուղար *Հ. Ղուկասյան*

ՔԱՂՎԱԾՔ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2008թ. ապրիլի 23-ի նիստի թիվ 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ նույն ամբիոնի 2004 թվականի հայցորդ Արսեն Այվազյանի ատեստավորման վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Դիլբանդյանը, Հ. Ղուկասյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով, որ Ա. Այվազյանը 2007 թվականի աշնանը ատեստավորվել էր պայմանականորեն, հանձնել է թեկնածուական մինիմումի երկու քննություն /փիլիսոփայություն և օտար լեզու/ և ստուգարք ինֆորմատիկայից, հրատարակել է չորս գիտական հոդված, տպագրության է պատրաստել ևս մեկը, պատշաճ մակարդակով ներկայացրել է ատենախոսության մի մասը, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ *Գ. Ղազինյան*

Խորհրդի քարտուղար *Հ. Ղուկասյան*

Իսկականի հետ ճիշտ է
Խորհրդի քարտուղար *Հ. Ղուկասյան*

ՔԱՂՎԱԾՔ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի

2008թ. ապրիլի 23-ի նիստի թիվ 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր Գեղամ Ղարախանյանի «Հայաստանի Հանրապետության ընտանեկան իրավունք» վերտառությամբ դասագիրքը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Բարսեղյանը, Ս. Մեղրյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով մեթոդական խորհրդի միջնորդությունը, ինչպես նաև այն, որ դասագիրքը գրված է պատշաճ մակարդակով և համապատասխանում է դասընթացի ծրագրին, Գ. Ղարախանյանի «Հայաստանի Հանրապետության ընտանեկան իրավունք» վերտառությամբ դասագիրքը երաշխավորել տպագրության:

Խորհրդի նախագահ *Գ. Ղազինյան*

Խորհրդի քարտուղար *Հ. Ղուկասյան*

Իսկականի հետ ճիշտ է
Խորհրդի քարտուղար *Հ. Ղուկասյան*

ՔԱՂՎԱԾՔ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի

2008թ. ապրիլի 23-ի նիստի թիվ 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու Հարություն Խաչիկյանի «Ազատազրկում. կրիմինալոգիական և քրեակատարողական հիմնախնդիրներ» (ռուսերեն լեզվով) վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Գաբուզյանը, Ս. Առաքելյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով մեթոդական խորհրդի միջնորդությունը, ինչպես նաև այն, որ նշված մենագրությունը գրված է պատշաճ գիտական մակարդակով և ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն, Հ. Խաչիկյանի «Ազատազրկում. կրիմինալոգիական և քրեակատարողական հիմնախնդիրներ» (ռուսերեն լեզվով) վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

Խորհրդի նախագահ *Գ. Ղազինյան*

Խորհրդի քարտուղար *Հ. Ղուկասյան*

Իսկականի հետ ճիշտ է
Խորհրդի քարտուղար *Հ. Ղուկասյան*